

Շուշաննա Թևանյան

ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության փորձագետ
12.10.2022թ.

Եռամսյակային հաշվետվություն

Հաշվետվության հասցեատեր

Հաշվետվությունը կներկայացվի ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ Հայկ Մուրադյանին:

Հաշվետվության ուշացման պատճառ

Հաշվետվությունը ներկայացվում է փոքր-ինչ ուշ՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Հաշվետվության նպատակ

Այս հաշվետվությունը նպատակ ունի՝ հասցեատիրոջն ամփոփ և թափանցիկ կերպով ներկայացնելու իմ՝ որպես մոնիթորինգի և գնահատման փորձագետի կատարած աշխատանքի և ստացած արդյունքների մասին տեղեկատվությունը:

Հաշվետվության կառուցվածք

Փաստաթուղթը Աղյուսակ 1-ի տեսքով ներկայացնում է հերթական երեք ամսիների ընթացքում արված աշխատանքների հիմնական ուղղությունները, ձեռնարկված գործողությունները և դրանց արդյունքները: Հաշվետվության վերջում համեմատականներ կտարվեն կատարված աշխատանքների և աշխատանքի նկարագրով սահմանված պարտականությունների միջև: Այսուհետև կարձանագրվեն առաջարկներ համագործակցության բարելավման ուղղությամբ:

Աղյուսակ 1

Հ/Հ	Ուղղություն	Գործողություն	Արդյունք/ակնկալվող արդյունք
1	Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի (SPAP II) գնահատում	1.1. SPAP-ի գրասենյակի աշխատակից Նվարդ Մկրտչյանի հետ համատեղ խմբագրել եմ SPAP II ծրագրի գնահատման համար առաջնային տվյալների հավաքագրման նպատակով խորհրդատու կազմակերպություն ընտրելու <u>տեխնիկական առաջադրանքի անգլերեն տարբերակը</u> ՝ ինկորպորացնելով Համաշխարհային բանկի (ՀԲ) և ԱՍՀՆ այլ գերատեսչությունների	1.1. Տեխնիկական առաջադրանքի վերջնական տարբերակը հաստատվել է ԱՍՀՆ ղեկավարության և ՀԲ գործընկերների կողմից, և խորհրդատու կազմակերպություն ընտրության գործընթացը մեկնարկել է:

		<p>հերթական դիտարկումները, ինչպես նաև ծավալուն կերպով խմբագրել եմ փաստաթղթի հայերեն վերջնական տարբերակը:</p> <p>1.2. Մասնակցել եմ SPAP II ծրագրի գնահատման համար առաջնային տվյալների հավաքագրման նպատակով խորհրդատու կազմակերպություն ընտրելու <u>հանձնաժողովի ձևավորման գործընթացին:</u></p> <p>1.3. Ծարունակել եմ աշխատել SPAP II ծրագրի գնահատման <u>ցուցանիշների ցանկի և հարցաշարերի վերջնականագման վրա՝</u> ինկորպորացնելով ՅԲ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ինտեգրված սոցիալական ծառայությունների երթանազմավարությունը մշակող «Ամերիա» ՓԲԸ-ի առաջարկները:</p>	<p>1.2. Հանձնաժողովի կազմը ներկայացնող հրամանը շուտով կշրջանառվի SPAP-ի գրասենյակի կողմից:</p> <p>1.3. Մինչ այս շաբաթվա վերջ ցուցանիշների ցանկն ու հարցաշարերը վերջնական կներկայացվեն ԱՍՀՆ ղեկավարությանը, ՅԲ-ի գործընկերներին, ՅՈՒՆԻՍԵՖ-ին և «Ամերիա» ՓԲԸ-ին:</p>
2	ՄԳ համակարգի ներդրում	<p>2.1. Համաշխարհային բանկի գործընկերների հետ պարբերաբար <u>քննարկել եմ</u> «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ուղղությունների առաջարկ» <u>ռազմավարական փաստաթղթի իրականացման և ֆինանսավորման հնարավորությունները:</u></p> <p>2.2. «Data for Impact» ծրագրի հայաստանյան ներկայացուցչի հետ պայմանավորվածություն եմ ձեռք բերել <u>առցանց հանդիպում-քննարկում կազմակերպելու Մոլդովայի աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության</u> ՄԳ համար պատասխանատու ստորաբաժանման հետ՝ փորձի փոխանակում իրականացնելու և</p>	<p>2.1. Որոշում է կայացվել դեռևս չմեկնարկել փաստաթղթով սահմանված գործողությունների իրականացումը՝ սպասելով ԱՍՀՆ ներքին կառուցվածքային փոփոխությունների արդյունքներին:</p> <p>2.2. Հանդիպումը երկու անգամ հետաձգվեց սեպտեմբերի 13-14-ի իրադարձությունների և մոլդովական կողմի խոսնակի առողջական խնդիրների պատճառով. այդուհանդերձ այս կամ մյուս շաբաթ հանդիպումը պետք է որ կայանա, եթե նոր խոչընդոտներ չստեղծվեն:</p>

		<p>մոլորակական փորձից դասեր քաղելու համար:</p> <p>2.3. «Data for Impact» ծրագրի հայաստանյան ներկայացուցչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել <u>անգլերեն թարգմանելու ՄԳ վերանայված կարգն ու մեթոդաբանությունը</u>՝ միջազգային գործընկերներին ներկայացնելու և դիտարկումներ ստանալու նպատակով:</p>	<p>2.3. Մեթոդաբանությունն ու կարգը թարգմանվել են. ՀԲ գործընկերների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ կարծիք ներկայացնելու փաստաթղթի վերաբերյալ: Անգլերեն տարբերակի թարգմանությունը մոտ օրերս կլավարկվի և կուղարկվի ինչպես ՀԲ-ին, այնպես էլ այլ միջազգային գործընկերների:</p>
3	<p>Աշխատանքի եվ սոցիալական պաշտպանության 2022-2026թթ ռազմավարություն</p>	<p>3.1. Նախարարի խորհրդական Վիկտորյա Այդինյանի հետ համատեղ վերջնականացրել եմ Աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ <u>ռազմավարության փաթեթը</u>՝ ինկորպորացնելով ինչպես ԱՍՀՆ, այնպես էլ այլ պետական գերատեսչություններից ստացված հերթական դիտարկումներն ու առաջարկները:</p>	<p>3.1. Ռազմավարական վերջնական փաթեթն ուղարկվել է վարչապետի աշխատակազմ:</p>
4	<p>ԱՄՆ ՄՁԳ-ի «ԿԴԻՅ Երեխաների խնդիրներով զբաղվող եվ սոցիալական ծառայություններ մատուցող աշխատուժի կարողությունների գնահատում» հետազոտություն</p>	<p>4.1. Մասնակցել եմ հետազոտական աշխատանքները համակարգող Ազգային առաջնորդության խմբի <u>առաջին հանդիպմանը</u>՝ որպես ԱՍՀՆ ներկայացուցիչ:</p> <p>4.2. Հետազոտության նպատակով անցկացվելիք հարցազրույցների համար Ազգային առաջնորդության խմբին ներկայացրել եմ <u>թեկնածուների անուններ</u> ԱՍՀՆ-ի համապատասխան ստորաբաժանումներից և Նախարարության ղեկավարության համաձայնությամբ՝ տրամադրել վարչական տվյալներ ընտրանքի ձևավորման համար:</p>	<p>4.1. Ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետազոտությանը աջակցելու համար տրամադրելու մի շարք վարչական տվյալներ և տեղեկատվություն՝ զգայուն հետազոտությունները Էթիկական չափանիշներով քննելու ընթացակարգերի առկայության մասին:</p> <p>4.2. Ազգային առաջնորդության խմբի կողմից կազմվել են հետազոտության պրոտոկոլն ու ընտրանքը և ներկայացվել ԱՍՀՆ՝ կարծիքի: Առաջիկա շաբաթվա ընթացքում դիտարկումներ կտրամադրվեն:</p>

		<p>4.3. «Սոցիե» փորձագիտական կենտրոնի և ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հետ քննարկել եմ հետազոտությունների նկատմամբ ՀՀ-ում առկա <u>Էթիկական պահանջների օրենսդրական և պրակտիկ հիմքերի հարցը:</u></p>	<p>4.4. Ազգային առաջնորդության խմբին տեղեկացրել եմ, որ ՀՀ-ում հետազոտական աշխատանքների նկատմամբ Էթիկական պահանջների իրավական հիմքերը բացակայում են, սակայն պրակտիկա կա Բժշկական համալսարանում, ՅՈՒՆԻՍԵֆ-ում և Առողջապահության նախարարությունում: Մտադրություն կա վերջինիս փորձը ներդնել ԱՍՀ-ում:</p>
5.	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծ	<p>5.1. <u>Խմբագրել եմ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:</u></p> <p>5.2. <u>Մասնակցել եմ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի նախագծի և կից փաթեթի վերաբերյալ ներգերատեսչական քննարկումներին:</u></p>	<p>5.1. Նախագծի «Մշտադիտարկում և գնահատում» բաժինը հնարավորինս համապատասխանեցվել է «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 27-ի N 70-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու» ԱՍՀ նախարարի 100-Ա հրամանով հաստատված ՄԳ կարգին և մեթոդաբանությանը:</p>
6.	Հայաստանում ջեռուցման նպատակով կենսավառելիքի օգտագործման կայուն զարգացման ռազմավարություն և կից կառավարության որոշման նախագիծ	<p>6.1. <u>Խմբագրել եմ ռազմավարության և կից որոշման նախագծի տեքստը:</u></p>	<p>6.1. Լայնածավալ բովանդակային և կառուցվածքային դիտարկումներ են ներկայացվել փաստաթղթերի վերաբերյալ՝ ձգտելով հետևել ՀՀ վարչապետի N 1508 – Լ որոշման «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ» հավելվածի պահանջներին:</p>
7.	Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն	<p>Խմբագրել եմ ռազմավարության տեքստն ու կից փաթեթը:</p>	<p>Լայնածավալ բովանդակային և կառուցվածքային դիտարկումներ են ներկայացվել փաստաթղթերի վերաբերյալ՝ ձգտելով հետևել ՀՀ վարչապետի N 1508 – Լ որոշման «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող</p>

			<p>ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ» հավելվածի պահանջներին:</p>
8.	<p>ՀՀ-ԵՄ մարդկանց միջոց 2փուլների հարցերով ենթակոմիտեի 8-րդ նիստ</p>	<p>8.1. Մասնակցել 7 ելույթ եմ ունեցել ենթակոմիտեի 8-րդ <u>նիստին</u>:</p>	<p>8.1. Ենթակոմիտեի նիստին ներկայացրել եմ Աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ ռազմավարության, Չբաղվածության ռազմավարության և Ժողովրդագրության ռազմավարության ուղղությամբ ԱՍՀՆ գրանցած առաջընթացը:</p>
9.	<p>Չբաղվածության ռազմավարություն</p>	<p>9.1. Ուսումնասիրել 7 դիտարկումներ եմ ներկայացրել Չբաղվածության ռազմավարությանն առնչվող, խորհրդատու կազմակերպության կողմից մշակված <u>վերլուծական նյութերի վերաբերյալ</u>:</p> <p>9.2. Խմբագրել 7 թարգմանել եմ (հայերենից անգլերեն) հոկտեմբերի 8-9-ը Ծաղկածորում կայանալիք ռազմավարական սեսսիայի <u>օրակարգը</u>, ինչպես նաև հրավերներ ուղարկել մի շարք պետական գերատեսչությունների՝ սեսսիային նրանց մասնակցությունն ապահովելու համար:</p>	<p>9.1. Դիտարկումների մեծ մասն ընդունվել է՝ հատկապես շահառուներից որակական տվյալներ ստանալու և վերլուծելու մասով:</p> <p>9.2. Օրակարգը շրջանառվել է ԱՍՀՆ ներսում և ուղարկվել բոլոր հրավիրյալներին: Հրավիրյալների ցանկը կազմվել է և ներկայացվել սեսսիայի կազմակերպման համար պատասխանատու անձին:</p>
10.	<p>Չբաղվածության երկու ծրագրերի մոնիթորինգ 7 նախնական գնահատում</p>	<p>10.1. Ծանոթացել եմ «Գործազուրկների զբաղվածության ապահովման» և «Ադրբեջանի կողմից 2016 և 2020թթ սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման» <u>ծրագրերին առնչվող նյութերին</u>, ճշտումներ կատարել ԱՍՀՆ Աշխատանքի և զբաղվածության վարչությունից, ուսումնասիրել միջազգային որոշակի փորձ նմանատիպ ծրագրերի մոնիթորինգի և գնահատման մասով:</p>	<p>10.1. Մշակվել են հետագա աշխատանքների անձնական օրակարգն ու մոտեցումը:</p>

Աշխատանքային նկարագրի եվ կատարված աշխատանքների համապատասխանություն

Ըստ աշխատանքի նկարագրի՝ իմ հիմնական պարտականությունը մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության լրամշակման և ընթացիկ մոնիթորինգին և գնահատման աշխատանքներին մասնակցությունն է: Առաջինի մասով՝ մասնակցել եմ երկօրյա քննարկումների Ազգային ինստիտուտի, վարչության աշխատակիցների և գլխավոր քարտուղարի հետ և ներկայացրել իմ առաջարկները, որոնց մի մասն ընդունվել է: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ մինչև տարվա վերջ դիտարկելու մեթոդաբանությունը լավարկելու հնարավորությունը՝ հենվելով պիլոտային գնահատումների արդյունքների վրա:

Երկրորդ բաղադրիչի մասով՝ այս եռամսյակի ընթացքում անմիջական ղեկավարիս նախաձեռնությամբ ընդգրկվել եմ զբաղվածության երկու ծրագրերի նախնական գնահատման համար կազմված աշխատանքային խմբում: Ինձ ուղարկվել են բոլոր առնչվող նյութերը: Ընդհանուր առմամբ դրական միտում եմ արձանագրել վարչության ամենօրյա աշխատանքներում ինձ ներգրավելու կապակցությամբ ու հույս ունեմ հետագա հաջող համագործակցության: